

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

----- 2017 ԹՎԱԿԱՆԻ N ----- Ա

ՄԻ ՇԱՐՔ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ԶՈՐԱԿՈՉԻՑ ՏԱՐԿԵՏՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Զինապարտության մասին>> ՀՀ օրենքի 16 հոդվածի 2-րդ կետով՝
Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո Ր Ո Շ ՈՒ Մ է՝

1. Պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տալ տարկետում՝

1) Ալեն Ներսեսի Շադունցին (ծնվ.՝ 1993 թ. փետրվարի 27-ին, Սյունիքի մարզ, Տեղ գյուղ, փող. 33, տուն 3, Օքսֆորդի համալսարան, ասպիրանտուրա)՝ մինչև 2022 թվականի ամառային զորակոչ.

2) Կարեն Տիգրանի Քրմոյանին (ծնվ.՝ 2000 թ. մայիսի 21-ին, քաղ. Երևան, Գյուլբենկյան 43 շենք, բն. 96, Զիկագոյի համալսարան, բակալավրիատ)՝ մինչև 2021 թվականի ամառային զորակոչ.

3) Արեն Արմանի Կարապետյանին (ծնվ.՝ 1999 թ. օգոստոսի 19-ին, ք. Երևան, Դավիթ Մայրան փող., 11 շենք, բն. 38, Օքսֆորդի համալսարան, բակալավրիատ)՝ մինչև 2020 թվականի ամառային զորակոչ.

4) Արա Տիգրանի Մամբրեյանին (ծնվ.՝ 1999 թ. մարտի 15-ին, քաղ. Ջրվեժ, Մայակ 2 շենք, բն. 46, Քեմբրիջի համալսարան, բակալավրիատ)՝ մինչև 2021 թվականի ամառային զորակոչ.

5) Ռոբերտ Սուրենի Դավթյանին (ծնվ.՝ 1995 թ. սեպտեմբերի 4-ին, քաղ. Երևան, Ա. Ահարոնյան 20 շենք, բն. 28, Մասսաչուսեթսի տեխնոլոգիական ինստիտուտ (MIT), մագիստրատուրա)՝ մինչև 2019 թվականի ձմեռային զորակոչ.

6) Միքայել Ռուբենի Մկրտչյանին (ծնվ.՝ 1999 թ. նոյեմբերի 13-ին, քաղ. Երևան, Զարյան 74-267, Հարվարդի համալսարան, բակալավրիատ)՝ մինչև 2021 թվականի ամառային զորակոչ:

2. Ընդունել ի գիտություն, որ վերոնշյալ քաղաքացիները ներկայացրել են նոտարական կարգով հաստատված հայտարարություն, որի համաձայն պարտավորվել են ուսումն ավարտելուց հետո վերադառնալ Հայաստանի Հանրապետություն և 2 տարի աշխատել իրենց մասնագիտությամբ՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունում կամ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության միջնորդությամբ՝ նրա կողմից առաջարկվող վայրում:

3. Սույն որոշման 1-ին կետի 2-րդ և 6-րդ ենթակետերը ուժի մեջ են մտնում Կարեն Քրմոյանի և Միքայել Մկրտչյանի 18 տարին լրանալուց հետո:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք - Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր ՈՒ Մ

1. Ընթացիկ իրավիճակը և խնդիրները

ՀՀ կրթության և գիտության նախարարություն է դիմել «Հուլիս» հիմնադրամի կրթաթոշակի ծրագրի պատասխանատուն՝ «Զինապարտության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան, «Հուլիս» հիմնադրամի 2017 թվականի կրթաթոշակին արժանացած մի շարք քաղաքացիների, մինչև ուսումնառության ավարտը պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու խնդրանքով:

2. Անհրաժեշտությունը

Որոշման նախագծի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է նրանով, որ վերոնշյալ քաղաքացիներին հնարավորություն կընձեռվի ավարտելու ուսումնառությունը, այնուհետև՝ ներկայանալու զինվորական ծառայության:

Ելնելով վերոշարադրյալից՝ նպատակահարմար եմ գտնում «Հուլիս» հիմնադրամի 2017 ուսումնական տարվա կրթաթոշակին արժանացած ՀՀ քաղաքացիներին պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տալ տարկետում մինչև ուսումնառության ավարտը:

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

<<Մի շարք քաղաքացիների պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու մասին>> ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ
 ՀՀ Նախագահի աշխատակազմի, ՀՀ պաշտպանության և ՀՀ արդարադատության նախարարությունների կողմից արված դիտողությունների և առաջարկությունների մասին

Նախարարության անվանումը	Դիտողություններ և առաջարկություններ	Նշումներ կատարման վերաբերյալ
<p align="center">ՀՀ պաշտպանության նախարարություն</p>	<p align="center">Դիտողություններ և առաջարկություններ չկան:</p>	
<p align="center">ՀՀ արդարադատության նախարարություն</p>	<p>1. Նախագծի 2-րդ կետում նշված «իր» բառը փոխարինել «իրենց» բառով՝ հաշվի առնելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի հոդված 36-ի 2-րդ մասի պահանջները:</p> <p>2. Նախագծի 3-րդ կետով նախատեսված «2, 3, 6 կետերն» բառերը անհրաժեշտ է փոխարինել «նախագծի 1-ին կետի 2-րդ, 3-րդ, 6-րդ ենթակետերն» բառերով՝ ելնելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի հոդված 41-ի 4-րդ մասի պահանջներից:</p>	<p align="center">Կատարված է:</p>
<p align="center">ՀՀ Նախագահի աշխատակազմ</p>	<p align="center">Դիտողություններ և առաջարկություններ չկան:</p>	